

Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԾՐԱԳԻՐ

<<ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԻԿԱ>> (ՔԻՄԻԱ)

ԱՌԱՐԿԱՅԻ (ԺԳ.00.02)

ՀԱՍՏԱՏՎԵԼ Է ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅԱՆ, ՔԻՄԻԱՅԻ
ԵՎ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ
ԽՈՐՀՐԴԻ 2012թ. 21.02 _____ № 5 __ՆԻՍՏՈՒՄ

ԵՐԵՎԱՆ 2012

ՆԵՐԱՄՈՒԹՅՈՒՆ

Ծրագրի նպատակն է հայցորդներին և ասպիրանտներին նախապատրաստել ԺԳ.00.02-«Հասավանդման և դաստիարակության մեթոդիկա» (քիմիա) մասնագիտությամբ որակավորման քննությանը:

Ծրագրի բովանդակությունը ներառում է գիտական աշխատանքում հետազոտող մանկավարժին անհրաժեշտ գիտելիքների ծավալը: Ծրագիրը միտված է ուղղորդելու քիմիայի դասավանդման մեթոդիկայի արդի և հեռանկարային ուղղություններում, բացահայտելու գիտամանկավարժական հարցեր ու խնդիրներ, ինչպես նաև հիմնավորելու ապագա գիտամանկավարժական հետազոտության թեման:

1. ԴԱՍՏԱՎԱՆԴՄԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

1. Անձը և կրթությունը, գիտությունը և մշակույթը: Իմացության տեսությունը՝ որպես ուսուցման տեսության մեթոդոլոգիական հենք: Ուսուցման օրինաչափությունները և սկզբունքները:
2. Հիմնական դիդակտիկական տեսությունները՝ անձի զարգացման տեսությունը տարբեր կրթական համակարգերում, ուսուցման նպատակների համակարգման տեսություն, զարգացնող ուսուցման տեսություն, ուսումնական գործունեության տեսություն, բովանդակային ընդհանրացման տեսություն, մտավոր գործողությունների փուլային ձևավորման տեսություն, խոսքի և զննականության միասնության տեսությունը ուսուցման գործընթացում, բացատրացուցադրական, խնդրահարույց, ծրագրավորված և համակարգչային ուսուցման տեսություններ: Ավանդական ուսուցման հոգեբանամանկավարժական հիմնախնդիրները և դժվարությունները:
3. Ուսուցումը որպես դիդակտիկական համակարգ և ամբողջական մանկավարժական գործընթացի բաղադրիչ: Ուսուցման կրթական, դաստիարակչական և զարգացնող նպատակների միասնությունը: Ուսուցման գործընթացի կառուցվածքը, նպատակները և արդյունքները:
4. Ուսուցիչը որպես կրթության գործընթացի սուբյեկտ: Ուսուցումը որպես ուսուցչի և աշակերտի արդյունավետ համագործակցություն:

5. Ոսուցման հոգեբանական օրինաչափությունները և մեխանիզմները: Ոսուցումը որպես կրթական խնդիրների լուծման կազմակերպված համակարգ: Յուրացման գործընթացի հոգեբանություն: Աշակերտների ինքնուրույն և ստեղծագործական ակտիվությունը ուսուցման գործընթացում:
6. Կրթության բովանդակության գիտական հիմունքները: Ազգային և միջազգային մշակույթը կրթության բովանդակությունում:
7. Հանրակրթության պետական չափորոշիչների բովանդակությունը, դերն ու նշանակությունը: Դպրոցական և բուհական քիմիական կրթության զարգացման հայեցակարգ: Սովորողների իմացական պահանջումների և քիմիա առարկայի ուսուցման հայեցակարգի համապատասխանեցման մակարդակի որոշումը:
8. Կրթական տեխնոլոգիաներ և ուսուցման մեթոդներ: Մանկավարժական տեխնոլոգիաներ: Մեթոդները և դրանց դասակարգումը:
9. Ոսուցման կազմակերպման մոդելներ: Կրթական հաստատությունների բազմազանությունը և ձևաբանությունը: Ինովացիոն գործընթացները կրթության ոլորտում: Հեղինակային դպրոցներ: Ուսուցման միջոցներ:

2. <<ՔԻՄԻԱ>> ԱՌԱՐԿԱՅԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

1. <<Քիմիա>> ուսումնական առարկայի բովանդակության ձևավորման հիմնախնդիրը արդի դպրոցում: Առարկայի նպատակները և խնդիրները դպրոցում: Ուսումնական նյութի ծավալի և բարդության բարելավման չափանիշներ: Դպրոցական քիմիական կրթության բաղադրիչները (նախակրթական, հանրակրթական, մասնագիտական կողմնորոշման): <<Քիմիա>> առարկայի բնապահպանական ուղղվածությունը:
2. Քիմիայի հիմնական տեսությունների (նյութի կառուցվածք, պարբերականության տեսություն, դիսոցման տեսություն, քիմիական կինետիկա և թերմոդինամիկա) դերը ուսումնական առարկայի դասավանդման գործընթացում:
3. Քիմիայի հիմնական հասկացությունների (նյութ, քիմիական տարր, քիմիական ռեակցիա, քիմիական արտադրություն) ուսուցման հիմնախնդիրները

ուսումնական առարկայի դասավանդման գործընթացում: Հասկացությունների կառուցվածքը, ձևավորումը և զարգացումը:

4. Տեսության և փաստերի կապը <<Քիմիա>> առարկայի դասավանդման գործընթացում: Փաստերի ընտրության սկզբունքները դպրոցական և բուհական դասընթացներում: Տեսության և պրակտիկայի կապը դպրոցական դասընթացում: Կիրառական գիտելիքների դերը, տեղը և նշանակությունը:
5. Քիմիան որպես ուսումնական առարկա հիմնական և ավագ դպրոցում: Քիմիայի դասավանդման առանձնահատկությունները հիմնական դպրոցում: Հոսքային ուսուցումը ավագ դպրոցում: Քիմիայի խորացված ուսուցմամբ հոսքերի կառուցվածքային առանձնահատկությունները:
6. Քիմիա առարկայի դերը բնագիտական մտածողության ձևավորման գործընթացում: Քիմիայի ներածական դասընթացների դերը և նշանակությունը:
7. Միջառարկայական կապերը որպես սովորողների ուսուցումը և դաստիարակությունը խթանող միջոց: Առարկաների ինտեգրման և դիֆերենցման գործընթացների պատմական ասպեկտները: Բնագիտական առարկաների տեղը և դերը արդի դպրոցում: Քիմիան բնագիտության համակարգում: Ուսուցչի և աշակերտի գործունեության բովանդակությունը և տեղը դիդակտիկական համակարգում: Միջառարկայական կապերի կիրառումը սովորողի աշխարհայացքի ձևավորման գործընթացում: Միջառարկայական կապերի արտացոլումը միջնակարգ կրթության պետական չափորոշչում:
8. Օրգանական քիմիան՝ որպես ուսումնական առարկա հիմնական և ավագ դպրոցում: Օրգանական քիմիայի դասավանդումը տարբերակված՝ պրոՖիլային ուսուցման պայմաններում: Օրգանական և անօրգանական նյութերի միջև ծագումնաբանական կապերի դերը օրգանական քիմիայի դասընթացի ձևավորման մեջ: Քիմիական կառուցվածքի տեսությունը որպես օրգանական քիմիայի դասավանդման տեսական հիմք: Հիմնական հասկացությունների ձևավորման սկզբունքները, ռեակցիաների դասակարգման առանձնահատկությունները քիմիայի խորացված ուսուցման դասընթացներում:

9. Անօրգանական նյութերի միջև ծագումնաբանական կապերի դերը հիմնական և ավագ դպրոցում՝ անօրգանական քիմիայի դասընթացի ձևավորման մեջ: Տարրերի քիմիայի ուսումնասիրման արդի մոտեցումներ: Տեսական անօրգանական քիմիան որպես անօրգանական նյութերի ուսումնասիրման հիմք:
10. Քիմիայի դպրոցական դասընթացի մոդուլային կառուցվածքը:
11. Քիմիա առարկայի ծրագրերի բովանդակությունը: Ծրագրերին ներկայացվող արդի պահանջները, ծրագրերի առարնձնահատկությունները:
12. Ընդհանրացումը և գիտելիքների համակարգումը քիմիայում:
13. Դպրոցական դասընթացի առանձին թեմաների դասավանդման մեթոդիկա:
14. Քիմիայի ուսուցման կազմակերպում:
15. Կրթական տեխնոլոգիաները և ուսուցման մեթոդները: Հասկացություն քիմիայի ուսուցման մեթոդների մասին և դրանց դասակարգումը: Ուսուցման մեթոդների տեսություն և համակարգ: Ուսումնական գործունեության կազմակերպման մեթոդներ: Քիմիայի ուսուցման մեթոդների և քիմիական գիտության մեթոդների հարաբերակցությունը: Սովորողներին <<քիմիա>> գիտության մեթոդներին ծանոթացում:
16. Քիմիական փորձը հանրակրթական դպրոցում: Քիմիական փորձի ցուցադրման մեթոդները և կատարելագործումը՝ ժամանակակից տեխնիկական մեթոդների կիրառմամբ: Վիրտուալ փորձի դերը քիմիայի դասավանդման զարժնթացում: Աշակերտական փորձը՝ որպես քիմիա առարկայի նկատմամբ հետաքրքրասիրության առաջացման, գիտելիքների, հմտությունների և կարողությունների ձևավորման միջոց: Ուսումնական գործընթացում քիմիական փորձի կատարման տարբերակների մեթոդաբանությունը: Քիմիական պրակտիկում: Բնապահպանական ուղղվածության քիմիական փորձեր:
17. Քիմիական խնդիրներ: Քիմիական խնդիրների լուծումը քիմիայի դասավանդման գործընթացում: Հաշվարկային և որակական խնդիրներ: Փորձարարական խնդիրներ քիմիայից: Քիմիայի խնդիրների լուծման մեթոդաբանությունը: Բնապահպանական ուղղվածության խնդիրների ուսուցում:

18. Հանրակրթական դպրոցի քիմիական լաբորատորիան: Լաբորատորիայի կառուցվածքը: Լաբորատորիայում դասապրոցեսի կազմակերպումը: Քիմիայի լաբորատորիայում աշխատանքի անվտանգության կանոնների պահպանումը: Ուսումնական գործընթացում քիմիական սարքավորումների պահպանումն ու օգտագործումը: Քիմիայի դասընթացի բնապահպանական ուղղվածության արտացոլումը քիմիական լաբորատորիայում: Քիմիայի ուսուցչի աշխատանքի գիտակրթական բովանդակությունը:
19. Քիմիայի դասագիրքը՝ որպես ուսուցողական համակարգ: Հիմնական և ավագ դպրոցի քիմիայի դասագրքերի բնութագիրը: Պրոպեդևտիկ (ներածական) դասագրքեր: Քիմիական խնդրագրքեր: Քիմիական ձեռնարկներ սովորողների համար: Ուսումնական գործընթացում դասագրքերի և այլ ձեռնարկների օգտագործում:
20. Քիմիայի ուսուցման արդյունքների ստուգում: Ստուգման մեթոդները, ձևերը և տեսակները: Ստուգողական բնույթի դիդակտիկ նյութերի պատրաստում: Ստուգողական աշխատանքների, ստուգարքների և քննությունների նախապատրաստման, անցկացման և վերլուծության մեթոդաբանությունը: Գիտելիքների ընթացիկ ստուգում թեստային առաջադրանքների միջոցով: Ստուգման ոչ ավանդական մեթոդների կիրառություն: Ծրագրավորված ստուգում: Սովորողներին ինքնաստուգման և փոխստուգման մեթոդների ուսուցում:
21. Քիմիայից ինքնուրույն աշխատանքների կազմակերպում: Ինքնուրույն աշխատանքների ստուգում և հաշվառում:
22. Դասապրոցեսը որպես ուսումնական գործընթացի կազմակերպման գլխավոր ձև դաս-դասարանական համակարգում: Քիմիայի դասի տեսակները: Քիմիայի ուսուցչի նախապատրաստումը դասապրոցեսին:
23. Քիմիայի ֆակուլտատիվ դասընթացներ և արտադասարանական աշխատանքներ: Բովանդակային ուղղվածություններ, կազմակերպման ձևերի և գործունեության տեսակների բազմազանություն:
24. Քիմիական բնույթի էքսկուրսիաներ, այլ բնագիտական առարկաների ուսուցիչների հետ համատեղ էքսկուրսիաների կազմակերպման նախաձեռնություն: Քիմիական արտադասարանական աշխատանք:

25. Քիմիայի ուսուցման գործընթացում նախագծերի դերը: Ուսումնական հետազոտական և բնապահպանական նախագծերի իրականացում: Սովորողների նախագծային գործունեության կազմակերպում:

3.ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Քիմիական կրթության սոցիալական դերը: Քիմիական կրթության դերը անձի ձևավորման և կայացման գործընթացում: Քիմիայի ուսուցման երկկողմանի և անձնային բնույթը:
2. Քիմիական կրթությունը որպես մշակույթի կարևոր բաղկացուցիչ: Քիմիայի կենտրոնական դերը բնագիտական առարկաների համակարգում:
3. Քիմիական կրթության բովանդակությունը: Քիմիական կրթության բովանդակության գիտական հիմունքները: Բնության, հասարակության, մարդու, տեխնոլոգիաների մասին գիտելիքների համակարգի ձևավորում: Ինտելեկտուալ և գործնական գիտելիքների, հմտությունների համակարգի ձևավորում: Ստեղծագործական գործունեության փորձառություն: Շրջակա աշխարհի, բնության, բնական ռեսուրսների, աշխատանքի, գիտության, սեփական անձի և այլ մարդկանց նկատմամբ զգացմունքային, կամային դրսևորումների փորձառության ձևավորում:
4. Հայացքների և համոզմունքների, համամարդկային իդեալների համակարգի ձևավորում: Կրթության բովանդակության մարդասիրական հայացքների ձևավորում: Բնապահպանական ուղղվածությամբ քիմիական կրթության ձևավորում: Ազգային և համազգային բաղադրիչների դերը քիմիական կրթության բովանդակության մեջ:
5. Քիմիայի դասավանդման մեթոդիկան որպես մանկավարժական ինտեգրված գիտություն: Քիմիայի դասավանդման մեթոդիկայի ուսումնասիրման առարկան և կառուցվածքը՝ որպես ուսուցման կրթական, դաստիարակչական և զարգացնող գործառույթների ամբողջություն:
6. Քիմիայի ուսուցման մեթոդադարձանության պրոբլեմատիկան: Քիմիական մեթոդադարձանության զարգացման պատմությունը: Ականավոր գիտնական մեթոդիստներ՝ Ա. Դ. Սմիրնով, Վ. Ն. Վերիսովսկի, Կ. Յա. Պարմենով, Պ. Ա.

Գլորիոզով, Լ. Մ. Սմորգոնսկի, Ս. Գ. Շապովալենկո, Դ. Մ. Կիրյուշկին, Լ. Ա. Ցվետկով, Վ. Ս. Պոլոսին, Դ. Պ. Երիզին, Ա. Ա. Ավետիսյան, Լ. Թ. Ասատրյան, Լ. Ա. Սահակյան, Մ. Գ. Զալինյան, Ա. Գ. Խաչատրյան և ուրիշներ, նրանց դերը քիմիայի ուսուցման մեթոդաբանության մեջ:

7. Քիմիայի ուսուցման մեթոդոլոգիան: Գիտության և ուսումնական գործընթացի ճանաչողական տեսությունը: Մանկավարժական հետազոտության մեթոդները քիմիայի դասավանդման գործընթացում:
8. Դիդակտիկան որպես քիմիայի ուսուցման և մեթոդաբանության կառուցվածքային բաղադրիչ: Ուսումնական գործընթացի էությունը, շարժիչ ուժերը, հակասությունները և տրամաբանությունը: Ուսուցման գործընթացի օրինաչափությունները և սկզբունքները:
9. Հիմնական հոգեբանադիդակտիկ տեսությունները և դրանց իրականացումը քիմիայի ուսուցման գործընթացում.
 - կրթության նպատակների համակարգման տեսություն
 - զարգացնող ուսուցման տեսություն
 - ուսումնական գործընթացի և դրա սուբյեկտի տեսություն
 - բովանդակային կրթության տեսություն
 - մտավոր գործունեության փուլային ձևավորման տեսություն
 - բացատրացուցադրական, խնդրահարույց, ծրագրավորված և համակարգչային ուսուցման տեսություն:
10. Հոգեբանական գիտելիքների տեղը և դերը քիմիայի ուսուցման մեթոդիկայի կառուցվածքում: Անհատական մոտեցման հոգեբանության ձևավորում: Քիմիայի դասի մանկավարժահոգեբանական վերլուծությունը: Անհատի կրթության և ինքնակրթության փոխադարձ կապը: Փոխադարձ ուսուցումը քիմիայում:
11. Ուսուցման մեխանիզմները և հոգեբանական օրինաչափությունները: Ուսումնառության հոգեբանական էությունը և կառուցվածքը: Քիմիայի յուրացման գործառույթի հոգեբանությունը: Սովորողների ուսումնական գործունեության խթանումը: Ընդունակությունների հոգեբանությունը: Հիշողության և վերլուծության, ինչպես նաև անձի հոգեբանականային ոլորտի դերը ուսման գործընթացում: Բանավոր խոսքը ուսումնական

գործընթացում: Մանկավարժի և սովորողների խոսքին ներկայացվող պահանջները: Սովորողների ինքնուրույնությունը և ստեղծագործական ակտիվությունը քիմիայի դասերին :

12. Ուսուցչի մեթոդական պատրաստվածությունը: Քիմիայի ուսուցչի՝ որպես առարկայի մասնագետի մեթոդական պատրաստվածության գործոնը ուսումնադաստիարակչական գործընթացում: Մեթոդական պատրաստվածության անընդհատությունը: Կրթությունը և ինքնքրթությունը: Շփումները և երկխոսությունները ուսումնական գործընթացում: Մասնագիտական-մեթոդական գործունեության էությունը: Մեթոդական վարպետության բաղադրիչները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Бабанский Ю. К. Проблемы повышения эффективности педагогических исследований. М., 1982.
2. Бабанский Ю. К. Педагогический процесс. Изр. Пед. Труды. М., 1989.
3. Батышев С. Я. Блочно-модульное обучения. М., 1997.
4. Беспалько В. П. Слагаемые педагогической технологии. М., 1989.
5. Вербицкий А. А. Активное обучение в высшей школе. М., 1991.
6. Լ. Թ. Ասատրյան, Լ. Գ. Ավանեսյան, Ա. Ս. Սահակյան Էկոլոգիական դաստիարակության համակարգը ավագ դպրոցում, Երևան, Զանգակ-97, 2003:
7. Верховский В. Н., Смирнов А.Д. Техника химического эксперимента. М., 1973.
8. Вивюрский В. Я. Заключительные уроки по химии в средней школе. М., 1980.
9. Լ. Թ. Ասատրյան Էկոլոգիական դաստիարակությունը միջին դպրոցում, Երևան, Զանգակ-97, 2000:
10. Լ. Թ. Ասատրյան, Փ. Ա. Սարգսյան Նախադպրոցական և կրտսեր տարիքի երեխաների էկոլոգիական կրթությունն ու դաստիարակությունը, Երևան, Զանգակ-97, 2001:
11. Давыдов В. В. Теория развивающего обучения. М., 1996.
12. Дидактика / Под ред. М. Н. Скаткина и И. Я. Лернера. М., 1989.
13. Ерыгин Д. П., Шишкин Е. А. Методика решения задач по химии. М., 1989.
14. Зайцев О. С. Методика обучения химии. М., 1999.

15. Моделирование педагогических ситуаций /Под ред. Ю. Н. Кулюткина, Г. С. Сухобской. М., 1981.
16. Назарова Т. С. Грабецкий А.А. Кабинет химии. М., 1980.
17. Назарова Т. С., Грабецкий А. А., Лаврова В. Н. Химический эксперимент в школе. М.,1987.
18. Сорокин В. В. Методика обучения химии на основе деятельностной теории учения. М.,1992.
19. Ա. Ա. Ղուկասյան, Լ. Թ. Ասատրյան, Ա. Ս. Կարապետյան Մանկավարժական բուհի կառավարման տեխնոլոգիան և զարգացման միտումները, Երևան, Մանկավարժ, 2005:
20. Чернобельская Г. М. Методика обучения химии в средней школе. М.,2000.
21. Чертков И. Н., Жуков П. Н. Химический эксперимент с малым количеством вещества. М., 1989.
22. Шамова Т. И. Активизация учения школьников. М., 1982.
23. Լ. Թ. Ասատրյան, Ա. Ս. Կարապետյան, Մ. Ա. Ասատրյան, Թ. Ֆ. Յոլակյան Կրթության համակարգի կառավարման հիմունքները, մաս I, Երևան, Զանգակ-97, 2003: